



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

11682

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԻԳԱԿԱՆ ՍԵՐԻ

## Արուեստանոցին

Ք Բ Ե Ր Ա

ՍՈՀՄԱՆԵԱԼ ՚Ի ԹԱՂԱԿՈՆ ԽՈՇՀՐԴԵ

ԵՒ ՊԱԽԵՐԱՑԵԱԼ

՚Ի ԽԱՌ ՃՈՂՈՎՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԵՐՆ Գ. ՊԱՂՏԱՍԼԵԱՆ  
(Առմանիա)

687

Z-24

1887

687  
2-24

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

Ար

ՀԱՅ ԹԳԱԿԱՆ ՍԵՌԻ


Արուեստանոցին

Թ Բ Ե Ր Ա

ԽԱՀՄԱՆԵԱԼ ՚Ի ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՔ

ԵՒ ՊԱԿԵՐԱՅԵԱԼ,

՚Ի ԽԱՌՆ ՃՈՂՈՎՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



12.002

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Գ. ՊԱՂՏԱՏԵԱՆ  
(Արամեան)

—  
1887

17505

# Կանոնագիր

Հ Ա Յ Ի Գ Ա Խ Ա Ն Ս Ե Ր Ի Ա Ր Ա Ւ Ե Ս Ա Ն Ո Յ Ի

'Ի Բ Ե Ր Ա

ՍԱՅՄԱՆԵԱԼ՝ Ի ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՔԵ

ԵՐԵՎԱՆԻ ՊՐԵՄԻՈՒՄ

՚Ի ԽԱՐՆ ՃՈՂՈՎԸ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Յօդ. 1. Ազգային կեդրոնական վարչութիւնն ,  
Բերայի Թաղական Խորհրդոյ նախաձեռնութեամբ ,  
Նոյն Թաղի մէջ իդական սեռի յատուկ արուես-  
տանոցի մը հաստատութիւնը որոշած , եւ յիշեալ  
Թաղի եկեղեցական դասու եւ խորհրդոյ առա-  
ջարկութեանը համեմատ , Ս . Երրորդութիւն Եկե-  
ղեցոյ յարակից չէնքին աշակողմեան մասն սոյն  
արուեստանոցի սահմանած է :

Յօդ. 2. Արուեստանոցի նպատակն է հայազգի աղջկանց ուսուցանել գործնական միջոցներով՝ կարելու արուեստն, ձեւագիտութիւնն, ասեղնագործութիւնն, զանազան աեսակ ձեռագործ, պատրաստել վերջապէս մասնագէտ արուեստանորուհիներ եւ միանգամայն սոյն ձեռնարկի յատկանալի դրամագլուխն յիշեալ արուեստից միջոցաւ շահագործելի զարգացումն եւ ի յարատեւութիւն սոյն հաստատութեան :

## ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Յօդ · Յ · Արուստանոցին մատակարարութիւնն  
յատուկ խնամակալութեան մը յանձնուած է, որ



2673

39

պիտի անուանուի «Խնամակալութիւն» Հայ իզական սեռի Արուեսանոցին ի Բերա» :

Յօդ. 4. Խնամակալութիւնն հինգ անդամէ կը բաղկանայ, զորս Թաղ. խորհուրդն կընտրէ եւ կեդրոնական Վարչութիւնն կը վաւերացնէ : Խնամակալութիւնն իւր մէջէն կընտրէ Ատենապետն, Գանձապետն եւ Ատենադպիրն :

Յօդ. 5. Խնամակալութեան պաշտօնավարութեան շրջանը պիտի տեւէ հինգ տարի իւր հաստատութեան թուականէն սկսեալ: Խնամակալութեան անդամք վերընտրելի են :

Յօդ. 6. Եթէ Խնամակալութեան անդամներէն հրաժարմամբ կամ որ եւ է պատճառ պակսող լինի, մնացեալ անդամք մինչեւ երկու ամիս ընտրելեաց երկպատիկ ցանկ մը պիտի ներկայեն առ Թաղական Խորհուրդն անոր մէջէն ընտրելու համար: Եթէ անփոյթ գտնուին այս պարտականութիւնը կատարելու, Թաղ. Խորհուրդն ուղղակի ինք պիտի կատարէ այդ ընտրութիւնն եւ ներկայէ առ կեդր. Վարչութիւն ի վաւերացումն:

Յօդ. 7. Բերայի Թաղ. Խորհուրդն արտօնեալ է (1200) հազար երկու հարիւր ոսկւոյ հանգանակութիւնն մը կատարել, յորմէ՝ Խնամակալութեան ձեռամբ՝ մաս մը պիտի յատկանաց սոյն արուեստանոցի հաստատութեան նախնական ծախուց, եւ մաս մը սկզբնական գործողութեանց :

Յօդ. 8. Խնամակալութեան կը պատկանի

Ա. — Բանալ արուեստանոցն, ըստ 7<sup>րդ</sup> յօդուածոյ կատարելի հանգանակութեան արդիւնքն ապահովուելէ անմիջապէս վերջը, նախապէս դնելով չնքին ներքին մասերն սոյն նպատակին պա-

հանջած պայմաններու մէջ եւ հայթայթելով միանգամայն հարկ եղած գործիքներն եւ մեքենայքն.

Բ. — Կարգել արուեստանոցի ծառայութեան պէտք տեսնուած պաշտօնեայներն.

Գ. — Տնօրինել իւր պատասխանատուութեաններքեւ բոլոր այն գործերն որք կը վերաբերին արուեստանոցին մատակարարութեան եւ շահագործման, կէտ նպատակի ունենալով միշտ սոյն ազգային հաստատութեան բարգաւաճումն:

Յօդ. 9. Խնամակալութիւնն արտօնեալէ արուեստանոցի շահագործմամբը գոյանալիք դրամագլուխն ապահով եղանակաւ արգասաւորելու, նոյնպէս եւ իւր նպատակին արդիւնաւորման համար կտակներ եւ նուէրներ ընդունելու, ինչպէս նաեւ արտասովոր հասոյթ գոյացնելու, մնալով միշտ օրինաց սահմանին մէջ համարատու առ Թաղ. Խորհուրդն :

Յօդ. 10. Խնամակալութիւնն իւր իրաւասութեան սահմանին մէջ գործելով հանդերձ, պարտաւոր պիտի լինի արուեստանոցին դրամական մատակարարութիւնն այնպիսի պայմաններու մէջ պահել որ այդ հաստատութեան պատճառաւ թաղային սնտուկին վրայ որ եւ է դրամական պարտաւորութիւն մը չձանրանայ, եւ պիտի ներկայէ ամեն տարի իւր գործառնութեանց համարատուութիւնն առ Թաղ. Խորհուրդն, որ իւր տարեկան համարատուութեան հետ կը ներկայէ զայն առ կեդրոնական Վարչութիւն :

Յօդ. 11. Եթէ վորձառութեամբ հաստատուի որ արուեստանոցը կարող չպիտի լինի բաւական հասոյթ արտադրել իւր մատակարարութեան ծա-

խուց գիմադրելու համար , Խնամակալութիւնն պարտաւոր պիտի լինի , առանց սպասելու իսկ տարեկան համարատուութեան ժամանակին , ներկայելիւր կացութիւն առ թաղ . Խորհուրդն , որ կը աեղեկագրէ առ Կեդր . Վարչութիւն , որպէս զի անմիջապէս դարման տարուելով ապագային վրայ բեռմը չըարդուի եւ որ եւ է պարտք չդոյանայ :

ՈՒՍՄԱՆՑ ԾՐԱԳԻՐ

**Յօդ . 12.** Արուեստանոցի ուսմանց շրջանը հինգ տարի է :

**Յօդ . 13.** Արուեստանոցի մէջ պիտի ուսուցուին Ա . — Իդական սեռի ամեն տեսակ զգեստուց պատրաստութեան եղանակը , արանց առանձին ճերմակեղէնք եւ հանդերձեղէնք , նոյնպէս երկու սեռի փոքր տղայոց հագուստ կարելու արուեստն իւր բոլոր ճիւղերով .

Բ . — Սիրգինի եւ սուրաշի աշխատութիւնք (մեքենայի վրայ) իրենց բոլոր ճիւղերովն .

Գ . — Ասեղնագործութիւն (յանալիա , յրօշի եւն)

Դ . — Տիվալ այսինքն ոսկեթել բանուածք .

Ե . — Պոսընի (իւր արդի ստացած նորաձեւութեամբքն) .

Զ . — Մեքենայով գուլպա հիւսել .

Է . — Արեւելեան զանազան կերպասից պատրաստութեան եղանակը : Խնամակալութիւնը մասնաւոր հոգ պիտի տանի որ այս արուեստներն հետզհետէ իրենց ստացած կատարելագործութեանը մէջ ուսուցուին :

**Յօդ . 14.** Խնամակալութիւնը պատրաստել պիտի տայ ժամանակացոյց մը , որուն մէջ արուեստանոցի

ծրագրոյ պարունակած արուեստից իւրաքանչիւրին աւանդման տարիներն եւ առօրեայ դասերու բաժանումներն պիտի նշանակուին : Սոյն ժամանակացացոցն ի տես պիտի դրուի արուեստանոցին մէջ :

ՊԱՅՄԱՆՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԵԱՑ

**Յօդ . 15.** Արուեստանոց մոնելու համար աշակերտուկին պարտի 12 տարին լրացուցած լինել եւ ներկայել իւր թաղի Խորհրդէն վաւերացեալ ծննդեան եւ պատուաստի վկայական մը :

**Յօդ . 16.** Ամեն աշակերտուկի պարտի յանձն առնուլ առաջին տարուան համար ճրիաբար աշխատիլ , եւ առաջին երկու տարուան համար ուսմանց ծրագրոյ մէջ նոյն ժամանակամիջոցին համար նշանակուած արուեստից միայն հետեւիլ : Իսկ մնացեալ երեք տարիներն նորա ընտրութեան կը ճգուի , եթէ ուզէ , աւելի յարմարութիւն ունեցած այս կամ այն ճիւղը մշակել մասնագէտ լինելու համար :

**Յօդ . 17.** Արուեստանոցին մէջ պատրաստուած որ եւ է աշխատութիւն սոյն հաստատութեան սեպէհականութիւնը պիտի լինի եւ ճրիաբար բան մը դուրս չպիտի հանուի :

**Յօդ . 18.** Աշակերտուկիք իրենց աշակերտութեան երկրորդ տարուցն սկիզբն , եթէ արդիւնաւոր աշխատութիւն մը արտագրելու կարող ճանչցուին , իրաւունք պիտի ունենան ընդունելու , եթէ ուզեն , օրական վարձք մը , զոր , Արուեստանոցի ներքին Տեսչին եւ հաշուակալին առաջարկութեամբ Խնամակալութիւնը պիտի սահմանէ , պայմանաւ որ աշակերտուկւոյն արտագրած աշխա-

տութեան արժէքին վրայ առնուազն 20 % Արուեստանոցին շահ մնայ :

Յօդ. 19. Արուեստանոցի առաջին երկու տարուան համար աշակերտուհեաց թիւն հարիւրը չը պիտի անցնի :

Յօդ. 20. Ազգային բարեկեցիկ ընտանեաց պատկանող օրիորդք, որք կը փախաքին հետեւիլ արուեստանոցին ուսմանց, պարտին վճարել ամսական թոշակ մը, զոր ինամակալութիւնը կը սահմանէ, եւ համակերպիլ ըստ ամենայնի՝ ներքին կանոնաց :

Յօդ. 21. Արուեստանոցի հնդամեայ շրջանն աւարտելով վկայական ընդունող աշակերտուհիք կրնան շարունակել իրենց աշխատութիւնն Արուեստանոցին մէջ՝ իր կամաւոր գործաւորուհիք։ Այդ կարգի աշակերտուհիք պարտաւոր են հետեւիլ այն ձիւղերու աշխատութեանց, որք պիտի նշանակուին Տեսչութեան կողմանէ եւ իրենց տրուելիք թոշակն երկուստեք հաւանութեամբ պիտի սահմանուի :

ՆԵՐՔԻՆ ՊԱՇՏՈՆՀՈՒԹԻՒՆ

Յօդ. 22. Արուեստանոցին ներքին վարչութիւնը Տեսչի մը յանձնուած է, զոր կ'ընտրէ ինամակալութիւնն եւ նմա պատասխանատու է :

Յօդ. 23. Տեսչին կը պատկանի Արուեստանոցի ներքին կանոնաց անթերի եւ անխափան գործադրութեան պատասխանատութիւնն :

Յօդ. 24. Արուեստանոցը պիտի ունենայ հաշուակալ մը, որուն պիտի յանձնուի Արուեստանոցի հաշուական բոլոր գործադրութիւններն. ի հարկին իրեն օժանդակներ պիտի տրուին :

Յօդ. 25. Հաշուակալութեան ձիւղը պարտի ունենալ հետեւեալ տետրակներն.

Ա. Օրագիր ասօրեայ գործողութեանց, Բ. Արկղի տետրակ,

Գ. Մթերանոցի տետրակ, որ պիտի կեդրոնացնէ արուեստանոցի նիւթեղինաց ելքն եւ մուտքը իրենց գիներովմ:

Դ. Աշակերտուհեաց տետրակ, հանդերձ թոշակաց նշանակութեամբ,

Ե. Արուեստանոցին մէջ պատրաստուելու համար յաճախորդաց կողմանէ տրուելիք յանձնարարութեանց տետրակ, եւ ուրիշ հետպահութեամբ տետրակ, տետրակիներ։ Հաշուակալութեան ձիւղին կը պատկանի նաեւ Արուեստանոցի հաշուական թղթակցութեանց եւ յաճախորդաց տրուելիք հաշուեցուցակաց պատրաստութեան հոգը :

Յօդ. 26. Արուեստանոցին մէջ կատարուելիք յանձնարարութեանց գինը ներքին տեսչին եւ հոշուակալին համաձայնութեամբ կը սահմանուի ընդ հսկողութեամբ լինամակալութեան :

Յօդ. 27. Արուեստանոցին հաշուակալութեան վերաբերեալ բոլոր ձիւղերն ինամակալութեան գանձապետին ուղղակի հսկողութեան ներքեւ պիտի մնան :

Յօդ. 28. Արուեստանոցը պիտի ունենայ հսկող մը, զոր պիտի ընտրէ ինամակալութիւնն ներքին Տեսչի առաջարկութեամբ :

Յօդ. 29. Հսկողին պաշտօնն է

Ա. Ամբողջ օր Արուեստանոցին մէջ գանուիլ աշակերտուհեաց աշխատութեան, մաքրութեան եւ բարեկեցութեան հսկելու համար :

Բ. Ներկայից եւ բացակայից ցուցակ մը  
բռնել եւ ի բացակայութեան Տեսչին փոխանոր-  
դել նմա:

Յօդ. ՅԱ. Արուեստանոցը պիտի ունենայ իւր  
ուսուցանելի արուեստից համար մի կամ մի քանի  
դասաստուներ, զորս Խնամակալութիւնը կ'ընտրէ  
Տեսչին առաջարկութեամբ:

Յօդ. ՅԱ. Դաստուք պարտին որոշեալ ժամա-  
նակին գտնուել իւրեանց յատուկ դասարանն եւ  
դասախոսել, ամիսն մի անգամ աշակերտուհեաց  
աւանդուած դասերուն մասնաւոր հարցաքննու-  
թիւնն ընել եւ նոցա պատրաստած գործերուն  
վրայ նշանակել իրենց յառաջադիմութեան աստի-  
ճանն եւ տեղեկագրել Տեսչին:

Յօդ. ՅԱ. Դասաստուաց բացակայութիւնն, եթէ  
բանաւոր պատճառ չունի, կը նշանակուի, եւ բա-  
ցակայութեան իւրաքանչեւր օրին պատկանած մասը  
կը զեղչուի իրենց ամսական թոշակներէն: Առանց  
պատճառի շարունակ միամսեայ բացակայութիւնն  
հրաժարական կը նկատուի:

Յօդ. ՅԱ. Արուեստանոցը պիտի ունենայ Տնտես  
մը, որ Արուեստանոցի բացման եւ գոցման եւ նո-  
րա բոլոր ներքին եւ արտաքին մասերուն մաքրու-  
թեանը հոգ պիտի տանի, ի հարկին ունենալով ի-  
րեն օժանդակներ եւ պիտի կատարէ իրեն յանձ-  
նուած միւս ծառայութիւններն:

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ ԺԱՄԱՆԱԿ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԵԱՑ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

Յօդ. ՅԱ. Արուեստանոցի աշխատութեանց ժա-  
մերն պիտի որոշուին ըստ Եւրոպական ժամացուցի

մատնաւոր ցուցակաւ մը, այնպէս որ ձմեռուան  
եղանակին մէջ 7 ժամէ եւ ամառն 9 ժամէ աւելի  
աշխատութիւն ըրլլայ, բաց ի հանգստեան վայր-  
կեաններէ: Ամեն եղանակի մէջ ցերեկուան ձաշի  
համար կէս ժամ եւ անկէ զատ մի ժամ ալ դադար  
պիտի տրուի, որուն մէջ աշակերտուհեաց պիտի  
աւանդուին թուաբանական չորս գործողութեանց,  
գծագրութեան (տեսէն լինելու) եւ իրագիտու-  
թեան դասեր: Այս կարգի դասախոսութեանց դա-  
սատուք աշակերտուհեաց մէջէն պիտի ընտրուին,  
եթէ գտնուին: Աշխատութեան իւրաքանչիւր եր-  
կու ժամերուն մէջ տասնական վայրկեան դադար  
կը տրուի:

Յօդ. ՅԱ. Աշակերտուհիք պարտին միջօրէի  
ձաշն միատեղ բերել:

Յօդ. ՅԱ. Աշակերտուհիք պարտին ամեն օր  
որոշեալ ժամուն արուեստանոցն գտնուիլ, բացա-  
կայք պարտին մինչեւ երեք օր իրենց բացակայու-  
թեան պատճառն իմացնել Տեսչութեան: Ամբողջ  
շաբաթ մը բացակայ եղողն, եթէ չը ծանուցանէ  
պատճառը կամ թէ արդարացի չդատուի, իւր  
աշխատութիւնն ուրիշի կը յանձնուի, տասն եւ  
հինգ օրեաց շարունակ եւ առանց բանաւոր պատ-  
ճառի բացակայութիւնն հրաժարում կը նկատուի:

Յօդ. ՅԱ. Տեսչութիւնը խնամակալութեան ար-  
տօնութեամբ մինչեւ մէկ ամիս արձակուրդ կրնայ  
չնորհել աշակերտուհւոյ մը, բայց եթէ թոշակաւոր  
է՝ թոշակ չվճարուիր:

ՊԱՏԻԺ ԵՒ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆ

Յօդ. ՅԱ. Աշխատութեան միջոցին կարգապա-

հութեան վլաս բերելու աստիճան բարձրածայն խօսիլն եւ կամ որեւէ ատեն անպարկեշտ վարուց մէջ գտնուիլն արգիլեալէ։ Հակառակ պարագայի մէջ, առաջին անգամ ազդարարութիւն կըլլաց Հսկողին կողմանէ, իսկ երկրորդ անգամուն, հրապարակաւ Տեսչութեան եւ երրորդ անգամուն խընամակալութեան կողմանէ յանդիմանութիւն կըլլաց, չորրորդ անգամուն, մէկ օրական վարձքի զեղչում եւ հինգերորդին արտաքսում։

Յօդ. 39. Աշակերտուհի մը անուշադրութեամբ ըրած վլասուն կէսը կը տուժէ, իսկ եթէ ապացուցուի որ գիտամիք ըրած է՝ ամբողջը։

Յօդ. 40. Գողութեան յանցանօք բռնուած աշակերտուհի մը կարաքսուի իսկոյն, իր գողօնին արժեգինը հատուցանելէ յետոյ։

Յօդ. 41. Ամեն տարի Ս. Յարութեան Տօնին առթիւ աղքատ և աշխատասէր աշակերտուհեաց համար մէկ մէկ ձեռք զգեստ պիտի շինուի, իսկ կաղանդի առթիւ անխտիր ամեն գործաւորուհեաց գրամական կամ նիւթեղին պարգեւներ պիտի բաշխուին։

### ԱՐ ԶԱԿՈՒՐԴ

Յօդ. 42. Ս. Զատկի, Ա. Ծննդեան եւ բարեկենդանի առթիւ երեքքական օր, եւ խաչանից տօնի օրերը, ինչպէս նաեւ վեհ։ Կայսեր Ծննդեան գահակալութեան տարեգարձի օրերն արձակուրդ պիտի արտի։

Յօդ. 43. Յուլիս եւ Օգոստոս ամսոց մէջ տեղի ունեցած աշակերտուհեաց բացակայութիւնք նկատողութեան չպիտի առնուին, սակայն արուեստանոցն սոյն ամիսներուն մէջ բաց պիտի մնայ յաճա-

խել ուզող աշակերտուհեաց համար եւ աստիճ թոշակ առնողներու համար զեղչ չպիտի ըլլաց։

### ՔՆՆՈՒԹԻՒՆՔ

Յօդ. 44. Արուեստանոցի աշակերտուհեաց քննութիւնք վեցամսեայ եւ տարեկան են։ Վեցամսեայ քննութիւնք, որք մասնաւոր պիտի ըլլան, կը կատարուին իներկայութեան ինամակալութեան թաղ։ Խորհուրդոյ եւ ինամակալուհի Տիկնայց։ Իսկ տարեկան քննութիւնք տեղի կունենան իւրաքանչիւր տարւոյ Յունիս 1ին, որոց կը հրաւիրուին թաղ։ Խորհուրդ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան Ռւսումական եւ Տնտեսական խորհուրդներն, աշակերտուհեաց ծնողք, դրսէն փափաքողք, նոյնակէս եւ մասնագէտք. Սոյն քննութիւնք կը կատարուին թէ՝ աշակերտուհեաց արտադրած աշխատութեանց ի տես դրուելովն և թէ՝ հանդիսականաց աչքին առջեւ իրենց կատարելիք գործերով։

Այս քննութեանց մէջ արժանաւոր հանդիսացող աշակերտուհիք երեք կարգի կը բաժնուին

### ՄԻջակ

#### ԼԱՄ

Բաջալաւաւ, որք կը նշանակուին յատուկ տումարի մէջ։

Իւրաքանչիւր աշակերտուհի արուեստանոցի հնգամեայ շրջանն աւարտելէ վերջը աւարտականի քննութիւն տալով վկայական կընդունի, որուն մէջ կը նշանակուին իր ստացած աստիճանը եւ իր մասնագիտութիւնը։

Սոյն վկայականները պիտի ստորագրուին Արուեստանոցի Տեսչին եւ ինամակալութեան կողմա-

նէ եւ պիտի վաւերանան թաղ. Խորհուրդէ :

Շրջանաւարտ աշակերտուհիք պարտին երեք  
ամիս ձրի աշխատիլ Արուեստանոցին մէջ, եթէ  
թոշակաւոր իսկ էին, եւ յետոյ ստանալ իրենց վկա-  
յականը :

Վերջին ՅՈՒՆԱԾԲ

Յօդ. 45. Բերայի իգական սեռի վարժարա-  
նաց Խնամակալուհի Տիկնանց կը պատկանի իրենց  
յարմար դատած եղանակաւ առօրեայ հսկողութիւն  
ի գործ դնել Արուեստանոցին վրայ, որպէս զի հոն  
յաճախող օրիորդք ըստ ամենայնի բարի վարուց  
մէջ դասախրակուին եւ յապագային պարկեշտ  
մայրեր լինելու պատրաստուին :

Արուեստանոցի Խնամակալութիւնն այս մասին  
հարկ եղած կարգագրութեանց եւ կանխահոգ ըշ-  
դուշութեանց վրայ յիշեալ Խնամակալուհի Տիկնանց  
հետ տիտի համաձայնի եւ ըստ այնմ պիտի գոր-  
ծադրէ :

Յօդ. 46. Շաբաթը մի անգամ Բերայի Եկե-  
ղեցականաց դասէն կրօնական ժողովէ արտօնեալ Ե-  
կեղեցական մը արուեստանոցին սրահը մի ժամ պիտի  
խօսի Քրիստոնէականի եւ բարյագիտութեան վրայ  
որոյ ունկնդրութիւնն Արուեստանոցի բոլոր աշա-  
կերտուհեաց համար պարտաւորիչ է :

Յօդ. 47. Արուեստանոցը պարտի ունենալ իւր  
յատուկ բժիշկն որ շաբաթն երկու անգամ պիտի  
այցելէ եւ աշխատելու անկարողներն պիտի տեղե-  
կագրէ Տեսչութեան. նոյնակէս դեղարան մը ըս-  
կըզբական կամ անմիջական դարմանաց համար,  
որք ձրիաբար պիտի մատակարարուին ամեն աշա-

կերտուհեաց՝ ի պահանջել հարկին :

Յօդ. 48. Հսկող տիկնայք նոյնակէս եւ խնա-  
մակալութեան անդամք՝ առանց կանխաւ ազդա-  
րարութեան, կայցելեն Արուեստանոցն եւ իւրա-  
քանչիւր ճիւղի վրայ հարկ տեսած տեղեկութիւն-  
ներն կ'ստանան Տեսչութենէ :

Յօդ. 49. Արտաքին այցելուք պարտին նախ  
խնամակալութեան դիմել եւ գրաւոր արտօնու-  
թիւն ստանալ ուղղեալ առ Տեսչութիւն :

Այցելուք ուղղակի որեւէ խօսակցութեան մէջ  
մտնելու իրաւունք չունին աշակերտուհեաց հետ :

Յօդ. 50. Յաճախորդաց կողմանէ Արուեստա-  
նոցին արուելիք յանձնարարութիւնք Խնամակա-  
լութեան կուղղուին :

Սահմանեալ ի Թաղական Խորհրդի Բերայի եւ յետ  
մնանութեան ընկալեալ եւ վաերացեալ յԱտենի Խառն  
ժողովոյ Ազգ. Կեդրոնական Վարչութեան.

3  
2  
6  
3  
3

Ասենապէս Քադ. Ժողովոյ Վ. Ասենապէսի Կրօն. Ժողովոյ

Յ. Կ. ՆՈՒՐԵՍ.Ն

Դեր-Ասենապէս

ՀՄՍ.ՑԵՍ.Կ ԵՊ. ԴԻՄՍ.ԲՐՍԵՍ.Ն

ՀՐԱՄԱՅԵԱԼ Ի ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՅ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

16 Յունվար 1887

Ի Պատրիարքաթի Հայոց

ի Կ. Պօլս



**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆՔ**

**ԲԵՐԱՅԻ ԻԳԱԿԱՆ ՍԵՐԻ ԱՐՈՒԵՍՏՈՆՑԻ**

**ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ**

## ՊԱՏՃԵՆ

Առաջարկութեան Բերայի Եկեղեցական դասու եւ  
Թաղ. Խորհրդոյ ուղղեալ առ Ազգ. Կեդր. Վարչութիւն:

Բերա, 48 Հոկտեմբեր 1886

Ամենապահիւ Տ. Տ. Յարութիւն Մրազան Արքավիսկոպոս  
Վեհապետեան, Պատրիարք Հայոց եւ Նախազան Ազգ. Կեդրո-  
նական Վարչութիւնան :

Թաղական Խորհուրդս շատոնց ի վեր Բերայի  
չքաւոր աղջկանց արհեստական դաստիարակու-  
թեանը նախասոող գործնական միջոցներ հայթայ-  
թելու մոադիր կը գտնուէր, վասն զի լաւ հասկը-  
ցած էր որ եթէ աղքատին ապրուստ ճարելու եղա-  
նակը չցուցուի, ի բարոյական կորուստ կը դիմէ :  
Ս.հա այս նկատողութիւններէ մշուելով՝ Թաղական  
Խորհուրդն իւր վերջին նստին մէջ սկզբամբ ընդու-  
նեց աղջկանց աշխատանոցի մը հաստատութիւնը  
եւ որոշեց դիմել առ ձեր Մրազանութիւն եւ առ  
Ազգ. Կեդրոնական վարչութիւն այս մասին արտօ-  
նութիւն ստանալու համար :

Սոյն աշխատանոցը Բերայի ազգային Բարեգութ-  
Տիկիններէ կազմեալ խնամակալութեան մը ձեռօք  
պիտի մատակարարուի որոյ ծրագիրն ի մօտոյ պի-  
տի ներկայանայ Կեդրոնին առ ի վաւերացում:

Այս առթիւ Թաղական Խորհուրդն՝ համախոռն  
թաղիս Եկեղեցական դասուն հետ, որոշեց որ սոյն  
աշխատանոցի յատկանայ նախակին Նարեկեան Վար-

ժարանի շէնքն, որ վերջին հրդեհին այրած ըլլալով, այս անդամ վերականգնուեցաւ :

Աւելորդ չեմք համարիր յայտարարել որ յիշեալ  
չէնքը Սուրբ Երրորդութեան Եկեղեցւոյ շրջափակին  
մէջ գտնուելով հանդերձ որեւէ անզատեհութիւն  
չունի աշխատանոցի յատկանալու : Հետեւաբար պա-  
տիւ ունիմք դիմելու այսօր առ Զեր Բարձր Սըր-  
բազութիւն խնդրելով որ բարեհաճի ի նորոյ հաս-  
տատելի աշխատանոցի մասին իւր եւ Կեդրոնական  
Վարչութեան բարձր հաւանութիւնն հազորդել մեղ,  
որպէս զի կարելի լինի Թաղական Խորհուրդոյ՝ ժամ  
յառաջ ձեռնարկել բոլոր այն միջոցներուն որոցմէ-  
կակնկալուի նախնական ծախուց համար հարկ տես-  
նուած դրամը, առանց նոր բեռ մը դնելու թաղա-  
յին սնտու կի ելմտացուցին վրայ :

## Մնամք խորին յարգանօք

**Թաղական Խնդրելիյ Աւագերեց Քառակի Ըստայի  
Սենատիս Գ.ԲԻԴՈՐ ՔՀՅ. ԱՃԱՄԵՍՆ ԵԵՐՍԼՍ Վ. ԱՐՄԱՆԵԱՆ  
Տ. Կ. ՆՈՐԵԱՆ**

(*թաղական լուսհեռաց*)



ԹԱՏԵԼ

Առաջին Պաշտօնագրոյ Ազգ Կեդրնաւական Վարչութեան ի պատասխանի Բերայի Եկեղեցական դատութական Խորհրդութեան առաջարկին:

ՊԱՏՐԻԱՐքԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Phi 234

27 Նոյեմբեր 1886

Դերապատի Տ. Ներսէս Ե. Պաղապէս Արսանեան Բարեխորա  
Քարոզիչ, Արժանապատի Տ. Գրիգոր Աւագ Քահանայ Անձմեան  
և Վասելիսական Ասենապէս Էլքինսի Թաղական Խորհրդոյ Բներայի:

Ստանալով ամսոյս 18 թուականին Զեր ուղղած  
յայտագիրն՝ փութացինք հազորդել Ազգ։ Կեդր։  
Վարչութեան Խառն Ժողովը, որ տեղեկացաւ թէ  
պատուարժան Խորհուրդու Բերայի մէջ չքաւոր Հայ  
աղջկանց աշխատութեան եւ ապրուստի միջոց մ'ըն-  
ձեռելու եւ զանոնք բարոյական անկումէ պահպա-  
նելու նպատակաւ՝ աշխատանոց մը հաստատելու  
Խորհուրդն յղացեր եւ անոր պէտքն սկզբամբ ըն-  
դունելով՝ արժան դատեր է Նարեկեան Վարժարա-  
նի շնչքն սոյն աշխատանոցի յատկացնել եւ մա-  
տակարարել զայն Հայ Տիկնանց Խնամակալութեան  
մը ձեռօք, յատուկ ծրագրոյ մը համաձայն, զոր  
ունի մատուցանել Ազգ։ Վարչութեան :

Այսուն ժողովն ուշադրութեան առնլով խնդիրն՝  
գոհ եղաւ մեծապէս թաղական Խորհրդոյ սոյն  
բարենսպատակ կարգադրութենէն, որ օգտակար  
արդիւնքներ ունենալու սահմանուած է, եւ հա-  
ճութեամբ ընդունեց զայն, այնու պայմանաւ որ

աշխատանոցի հսկողութիւնն եւ գործին բովանդակ  
պատասխանատուութիւնն թաղ. Խորհուդն ստանձնէ  
առաջի Ազգ. Կեդր. Վարչութեան, եւ պաշտօնա-  
կան յարաբերութիւնք այս մասին կատարուին ուղ-  
ղակի անոր հետ:

Հետեւաբար կը մնայ այժմ պատուարժան Խոր-  
հրդոյդ սահմանել այն ամեն միջոցներն որոցմավ  
հնարին պիտի լինի աշխատանոցին պէտք եղած  
ծախտց գումարն հայթայթել եւ խոստացեալ ծրա-  
գիրն յուղարկել մեզ, որպէս զի Խառն ժողովոյ  
վաւերացման ներկայանայ եւ գործադրութիւնն  
որոշուի:

Մնամք աղօթարար

Պատրիարք Ա. Պօլոսյ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

### ՊԱՏՃԵՆ

Տեղեկագրոյ թաղ. Խորհրդոյ Բերայի հանդերձ  
կանոնագրի ծրագրով ուղեալ առ Ազգ. Կեդր.

Վարչութիւն:



ԹԱՂԱՎԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

42 Յուլիս 1887

Առ Ամենապատի Տ. Տ. Յարութիւն Սրբազն Արքափակոպոս  
Վեհապետեան, Պատրիարք Հայոց եւ Նախագահ Ազգ.  
Կեղրոնական Վարչութեան:

Նոյեմբեր 27 թուական եւ 251 թուակիր պաշ-  
տօնագրով Զեր Բարձր Սրբազնութիւնը բարեհա-

ճած էր ծանուցանել որ Ազգային Կեդրոնական  
վարչութեան Խառն Ժողովն՝ ըստ մեր առաջարկի  
սկզբամբ ընդունած է Բերայի Սուրբ Երրորդութիւն  
Եկեղեցւոյ յարակից շնչքին մէջ հայազգի աղջկանց  
համար Սրուեստանոցի մը հաստատութիւնը: Նոյն  
առթիւ Զեր Բարձր Սրբազնութիւնն հրամայած էր  
ծրագրել թէ այն միջոցներն որոցմավ հնարին պիտի  
լինի սոյն արուեստանոցի պէտք եղած ծախտց  
գումարն հայթայթել, եւ թէ յիշեալ հաստատու-  
թեան մատակարարութեան պայմաններն, որպէսզի  
այս մասին պատասխանատուութիւնք եւ յարա-  
բերութիւնք նախապէս լաւ ճշգուած լինին:

Արդ՝ պատիւ ունիմք այսօր ներփակեալ մատու-  
ցանելու առ Զեր Բարձր Սրբազնութիւն վերոյիշեալ  
Սրուեստանոցի հիմնական կանոնագրոյ մի ծրագիրն  
որ խորհրդոյս դիւանն մասնագիտաց օժանդակու-  
թեամբ պատրաստած լինելով, իւր երէկուան ընդ-  
հանուր նատին մէջ յօդուած առ յօդուած քննու-  
թեան ենթարկուել յետոյ, միահամուռ քուէով  
ընդունուած է:

Ինչպէս պիտի տեսնուի սոյն ծրագրի ընթեր-  
ցումէն, թաղական Խորհուրդն ներշնչուելով նոյն  
խոկ այն մոտակութենէ զոր Ազգ. Կեդր. Վար-  
չութիւնն իրաւամբ ցուցած էր ի մասին պատաս-  
խանատուութեան այս կարեւոր ձեռնարկի, յար-  
մար գատած է որ նորակառոյց տշխատանոցի մա-  
տակարարութիւնն յանձնուի ուրոյն Խնամակալու-  
թեան մը պատասխանատու հանդէպ թաղական  
Խորհրդոյ եւ Կեդրոնի, եւ որոյ ընտրութիւնն են-  
թարկեալ պիտի մնայ Կեդրոնական Վարչութեան  
վաւերացման:

Աւելորդ չեմք համարիր սա կէտն ալ նշմարել տալ որ հիմնարկելի արուեստանոցն յարատեւութեան եւ ապահովութեան պայմաններու մէջ պահելու համար, խորհուրդս ուզած է նկատել զայն իրր գործարան մը որ իր դրամագլուխը շահագործելու համար ամեն հաւանականութիւնք իւր մէջ պիտի պարունակէ եւ սոյն գործարանի զարգացումէն ու բարդաւաճումէն միայն պիտի բղիսին այն մեծ օգուտներն որք իրաւամբ կակնկալուին հայզգի իդական սեռի վիճակին բարւոքմամբը: Վերջապէ՞ Ազգն՝ այսօր եւ մի անգամու համար երկու միջոցով կը մասնակցի արուեստանոցի բացմանը. առաջինն է Բերայի թաղին շնչերէն մին ձրիաբար յատկացնելով այդ արուեստանոցի, երկրորդ արտօնելով հազար երկու հարիւր ոսկեոյ հանգանակութիւն մը որ Հանդանակիչ մասնախմբի մը ձեռօք պիտի կատարուի:

Իսկ՝ գալով կանոնագրոյ միւս տրամադրութեանց, ասոնք կը վերաբերին, ինչպէս պիտի տեսնուի, Արուեստանոցի մասակարարութեան եւ իր աշխատութեանց կանոնաւոր արդիւնաւորմանը, եւ հիմնուած են այս տեսակ ձեռնարկներու մէջ ստացուած փորձառութեան վրայ:

Խորհուրդս՝ իւր երէկուան նստին մէջ, ի ձեռին առնլով միանգամայն Արուեստանոցի Խնամակալութեան կազմութեան ինդիրը, միահամուռ քուէով որոշեց առ Ազգային կեդրոնական Վարչութիւն ընարելի ներկայել Խորհրդոյս Ատենասլետ էֆէնտին, Աղնուաշուք Գրիգոր էֆէնտի կիւմիւշիէրտան (որ յանձնառու եղած է գանձապետութեան պաշտօնը վարել), Մեծապատիւ Տիգրան էֆէնտի Տավուտեան

եւ կարապետ էֆէնտի Բապումձնեան: Մօտ օրէն հինգերորդ անդամը պիտի ներկայացուի այս չորս անձանց կողմանէ:

Եւ որովհետեւ մասիաքելի է որ յառաջիկաց Մարտ 1 ին Արուեստանոցը բացուի, նկատելով միւս կողմանէ որ թէ շնչին ներքին մասերն արուեստանոցի յարմար պայմաններու վերածելու գործը, եւ թէ հարկ գատուած գործիքներու եւ մեքենաներու հայթայշումը բաւական ժամանակի կարօտեն, Խորհրդոյս որոշմամբ համարձակութիւն կ'առնումը ինդիրել Զեր Բարձր Արքազնութենէ որ բարեհաճի տալ իւր հրանինն առ որ անկ է, որպէս զի սոյն ծրագրի եւ ընտրութեանց մասին հարկ եղած օրինական գործողութիւնք կատարուելով, ժամ յառաջ ստանան Ազգ, Կեդր. Վարչութեան վաւերացումը, որպէս զի կարելի լինի հիմակուընէ նախապարաստական գործոց ձեռնարկել:

Սոյն նպատակաւ թաղական Խորհրդոյս կազմանէ կարգեալ Հանգանակիչ Մասնախումբն արդէն աշխատիւ սկսած է հանգանակութեան կարեւոր գործն ի գլուխ հանելու համար:

Մնամք Խորին յարգանօք

Ատենապատիւ

Ատենապետ

ԿԱՐԱՊԵՏ ԲԱՊՈՒՄՁՆԵԱՆ

Յ. Կ. ՆՈՒՐԵԱՆ

(Թ-Ղ-Ղ-Ղ-Ղ Խ-Շ-Շ-Շ)



## ՊԱՏՃԵՆ

Տեղեկագրոյ Ազգ. Վեդր. Վարչութեան Տնտեսական  
Խորհրդոյ :

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
Թիվ 461

Կ. Պոլիս 15 Յունիար 1887

Ամենապատիւ Մրբազան Պատրիարք Հայր Նախազահ  
Պատկառելի Կեդր. Վարչութեան :

Զեր Բարձր Սրբազնութեան յանձնարարութեան համեմատ Տնտեսական Խորհուրդս ուշադրութեան առաւ Բերայի Պատուարժան Թաղաղական Խորհրդոյ ամսոյս 12 թուականաւ տեղեկագիրն եւ ընդ նմին նոյն թաղին մէջ հայ աղջկանց համար հաստատուելիք արուեստանոցի հիմնական կանոնագրի 50 յօդուածէ բաղկացեալ ծրագիրն :

Ազգային Վարչութեան Տնտեսական Խորհուրդս այս հաստատութեան մասին՝ որ ամեն տեսակէտով անհրաժեշտ էր մեր ազգին Պօլսերնակ իգական սեռին համար, թէ իր պատուար մ'ընդդէմ նորաձեւութեան առթած աւելորդ ծախուց եւ թէ իր նախադուռն աւտոնին տնտեսութեան, Բերայի Պատուարժան Թաղական Խորհրդոյ հեռատես հոգածութիւնը, նուիրած ջանքերն եւ ինքնայորդոր ստանձնած այս ամենակարեւոր այլ ծանրատաղտուկ ծառայութիւնը գոյութեամբ գնահատելէ յետոյ՝ յիշեալ կանոնագրին իր ձեռնահասութեան պատկանած 8, 9, 10, եւ 25<sup>րդ</sup> յօդուածոց

մասին հետեւեալ դիտողութիւններն արժան կը համարի ներկայել Զեր Բարձր Սրբազնութեան :

Ա. — Ութերորդ յօդուածի վերջին մասը, բարեփոխել սապէս. « Համարատու առ Ազգային կեդրոնական Վարչութեան Տնտեսական Խորհուրդն : »

Բ. — Իններորդ յօդուածին վրայ յաւելու. « Համարատու թիւն առ Թաղ. Խորհուրդ եւ Տնտեսական Խորհուրդն կեդր. Վարչութեան. իսկ յառաջիկայ տարւոյ ելմտացոյցը Թաղական Խորհրդոյ եւ Խնամկալութեան կողմէ ստորագրեալ տարեգլխէն գոնէ երկու ամիս առաջ յղել առ Տնտեսական Խորհուրդն : » Այն բարեփոխութիւնն հետեւեալ Խորհուրդութեամբ մտաբերած է Խորհուրդս :

Հստ որում Բերայի Պատուարժան Թաղական Խորհուրդն իւր պաշտօնին բնութեամբ իւր թաղին մէջ հաստատուելիք հաստատութեան մը նիւթական եւ բարոյական պիտոյից ի մօտոյ եւ փորձառութեամբ կրնայ իրագէկ լինիլ եւ ամէն առիթներու մէջ դիւրութիւններ ընծայել արուեստանոցի Խնամկալութեան, բանաւոր կը թուի Խորհրդոյս որ՝ արուեստանոցի Խնամկալութեան պատրաստելիք ելմտացոյցը Թաղական Խորհրդոյ բովին անցնելէ յետոյ՝ Խնամկալութեան եւ Թաղական Խորհրդոյ միահամուռ ստորագրութեամբ ներկայանայ Տնտեսական Խորհրդոյ, ինչպէս նաեւ տարեկան հաշուեցոյցն :

Դ. — Քսան եւ հինգերորդ յօդուածին վերջը. « Եւ ուրիշ հետզհետէ հարկ տեսնուելիք օժանդակ տետրակներ, որք ընդ ամենն պէտք է կանխաւ

դրօւմուած լինին Տնտեսական Խորհրդոյ կողմէ : »  
Վասն զի Տնտեսական Խորհրդոյն այս կէտն ազ-  
գային ընդհանուր հաստատութեանց համար ար-  
դէն օրէնքի կարգ անցնելու անհրաժեշտ հարկն  
զգալով՝ անոր ծրագրովը կզբաղի :

Արդ՝ Տնտեսական Խորհրդոյ յիշեալ ծրագրին  
վրայ ունեցած իւր վերոյիշեալ երեք դիտողու-  
թիւնքն աւարտելով հանդերձ չի վարանիր իւր  
հիացումը յայտնել այս հաստատութեան ծնունդ  
տուող գաղափարին վրայ, եւ անկարեւոր չհամա-  
րիր այս առթիւ իւր ունեցած ինչ ինչ խորհրդա-  
ծութեանց արդիւնքը ներկայել Զեր Բարձր Արք-  
բազնութեան :

Ա. Հսա որում սոյն հաստատութիւնը բնու-  
թեամբ եւ նպատակաւ մի եւ նոյն է Սովելոց  
Յանձնաժողովոյ թողած դրամագլխի հասոյթով  
բացուելիք արհեստանոցին, Տնտեսական Խորհրդո-  
րը այդ դրամագլխի հասոյթն հարիւր Օսմ. ոսկ-  
եայ համելէ յետոյ՝ անկէ ինչ եւ է մաս մը յիշեալ  
հաստատութեան բաժին սահմանելու գաղափարը  
կը տածէ :

Բ. Աղջկանց արուեստանոցի նախապատրաստա-  
կան ծախուց հայթայթման համար որոշեալ 1,200  
ոսկոյ հանդանակութիւնը 1,500 ոսկոյ քանա-  
կութեամբ կատարել բանաւոր կը դատէ, պայմա-  
նաւ որ այդ յաւելի 500 ոսկին ի պահեստի եւ  
յաւանդ մնայ Թաղական Խորհրդոյ արկղին մէջ,  
այժմէն աննախատեսելի ծախուց դիմադրելու հա-  
մար՝ Աղդային կեղրոնական վարչութենէն արտօն-  
ուելին յետոյ :

Սոյն կարեւոր հաստատութեան ծնունդ տուող

Պատուարժան Թաղական Խորհրդութիւն ըստ որում  
զոհողութիւն մ'ալ կատարել կուտայ Թաղային  
սնտուկին՝ իւր կալուածներէն մին արուեստանոցի  
յատկացնելով, եւ կը զրկուի ընդ միշտ անոր եկա-  
մուտէն, եւ զի յիշեալ հաստատութիւնն իւր կա-  
նոնագրին պահաջմամբ մինչեւ աստիճան մը կեղ-  
րոնական արհեստանոց ըլլալով, սորա մատու-  
ցանելիք ծառայութիւնն իւր Թաղին մէջ սահմա-  
նափակուած չէ, հետեւաբար այդ զոհողութեան  
չափ մը տրուած ըլլալու, Թաղային կալուած մը  
իւր Եկեղեցւոյն բազմազան պիտոյից հանդէպ ան-  
հասոյթ չթողելու եւ յապագային նորակազմ Թա-  
ղական Խորհրդոց եւ Խնտամակալութեանց մինչեւ  
վարձուց առթիւ ինդրոյ նիւթ չդոյանալու համար  
իրաւացի կը համարի յիշեալ հաստատութեան չին-  
քին համար տարեկան չափաւոր վարձ մը որոշուիլն,  
որ առ այժմ տարուէ տարի իբր պարտք նշանակուի  
արհեստանոցին տումարաց մէջ՝ յառաջիկային ար-  
հեստանոցի արդիւնաւոր տարեաց հասոյթէն վը-  
ճարուելու պայմանաւ, եւ պահանջ մը Թաղ. տու-  
մարաց մէջ, ուստի այս իմաստով յօդուած մը կա-  
րենալ յաւելցուիլը կը յիշեցնէ :

Մնամք որդիական յարդանօք

Ի դիմաց Աղդ. Տնտեսական Խորհրդոց

Վասն Ատենապարի

ԵԼԻԱԶԱՐ

ՄԵԼԻՔԵԱՆ

(Տերեւ. Խորհրդու)

Վասն Ատենապետի

Լ. ՓԱՓԱԶԵԱՆ



## ՊԱՏՀՃԵՆ

Պատրիարքական Կոնդակի վասն հաստառորեան  
Բերայի իզական սեռի արուեստանոցին :

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Թիւ 259

ԿՈՍՏԱՆԴԱՎՈՒԹԻՒՆ

Վաեմափայլ Ասենապես Էֆէնտի Թաղ. Խորհրդոյ Բերայի.

Աղդ. Կեդրունական Վարչութեան իյառն Ժողովն իւր երեկի նստին մէջ, ուշադրութեան առաւ Պատուարժան Խորհրդոյդ կողմէ ամսոյս 12 թուականաւ ուղղեալ գրութիւնն եւ յարակից կանոնագրոյ ծրագիրն, որ կը վերաբերին Բերայի մէջ հաստատելի իդական սեռի Արուեստանոցի ինդրոյն, ինչպէս նաև Տնտեսական Խորհրդոյ այս մասին մասուցած տեղեկագրոյ Եղրակացութիւններն .

Արդ, ինչպէս Նոյեմբեր 27 թուականաւ պաշտօնագրով ծանուցուած էր Զեղ, Խառն Ժողովի նախորդ որոշմամբ յարմար գատած էր որ այդ Արուեստանոցն՝ թէսէտեւ իրմէ ակնկալեալ արդեամբն ընդ հանուր կերպիւ Հայ իդական սեռի վիճակին բարւոքման սատարելու սահմանեալ, այսու ամենայնիւ մատակարարութեան եւ համարատուութեան մասին գտնուի միշտ Խորհրդոյդ պատասխանատուութեան ներքեւ, իրը մին Բերայի կրթական հաստատութեանց, եւ, ըստ այնու, Խնամակալութիւնն լինի ուղղակի համարատու առ Թաղական Խորհրդն եւ անոր միջոցաւ առ կեդրոնական Վարչութիւնն օրինաց սահմանին մէջ, հետեւաբար սոյն հիման եւ Տնտեսական Խորհրդոյ Եղրակացութեանց վրայ, նոյն ծրագրոյն մէջ հարկ եղած

սրբագրութիւններն կատարուելի եւ ուրիշ քանի մը կէտերու մասին ինչ ինչ բարեփոխութիւններ սահմանուելի յետոյ՝ Խառն Ժողովի ընդունեց եւ վաւերեց ներկայացեալ կանոնագրին իւր ամբողջութեամբ, հաստատելով ընդ նմին ի պաշտօն Սրուեստանոցի ինամակալութեան Խորհրդոյդ կողմէ ընտրեալ չորս անդամներն, որք են

1. Վահեմ. Յովիանենէս Էֆէնտի. Նուրեան
2. Աղն. Դրիգոր » Կիւմիււկէրտան
3. » Տիգրան » Տավուտեան
4. » Կարապէս » Փափուննեան

Արդ՝ ներկանեալ հաղորդելով Պատուարժան Խորհրդոյդ Արուեստանոցի կանոնագրոյն վաւերացեալ օրինակն, կը յանձնարարեմք որ համիք հրաւիրել նորակազմ ինամակալութիւնն ձեռնարկելու իւր պաշտօնին, եւ աներկմիտ եմք որ սիրայօժար պիտի նուրիք անոր Զեր աջակցութիւնն, որպէս զի Խորհրդոյդ այդ ամենակարեւոր ձեռնարկն՝ որ իւր պաշտօնավարութեան նշանաւոր եւ փառաւոր գործերին մին պիտի լինի միշտ, ի գլուխ հանուի, եւ Բերայի նմոն կարեւոր թաղի մը մէջ իդական սեռի բարոյական եւ նիւթական վիճակին բարւոքման սահմանեալ այդ օգտակար հաստատութիւն կարենայ արտադրել ակնկալեալ օգուտն:

Սւելորդ չեմք համարիր յանձնարարել նաեւ պատուարժան Խորհրդոյդ որ համիք ընտրել ընդ հուպ արուեստանոցի ինամակալութեան պակաս մէկ անդամն եւ յայտագրել մեզ ի հաստատութիւն:

Մնամք աղօթարար

Պատրիարք Կ. Պոլսոյ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

19682

2013



